ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.06.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/32

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Մավշին» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ

Հ. Ենգոյանի (լիազորագիր՝ տրված 20.05.2021թ.),

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի լիազորված ներկայացուցիչ

Ս. Սարգսյանի (լիազորագիր՝ տրված 24.05.2021թ.),

քննելով Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար Գնդեվանքի քայլարշավային արահետի բարեկարգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «TUR-11.6» Ազգային մրցակցային մրցույթի շրջանակներում «Մավշին» ՍՊԸ-ի կողմից 19.05.2021թ. ներկայացված (20.05.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/32 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Մավշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Մավշին» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 19.05.2021թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար «Գնդեվանքի քայլարշավային արահետի բարեկարգում» շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված TUR-11.6 ծածկագրով գնման ընթացակարգ /այսուհետև նաև՝ Ընթացակարգ/:

Վերը նշված Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել միայն «Մավշին» ՍՊԸ-ն (Ընթացակարգի միակ մասնակիցը):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից տեղի ունեցած նիստի արձանագրության՝ «Մավշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաթեթում բացակայել են որոշ փաստաթղթեր /ծանուցումը կցվում է/ և www.armeps.am համակարգի միջոցով ուղարկված ծանուցմամբ մասնակցին առաջարկել է մինչև 18.05.2021թ. ներառյալ շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Նույն 18.05.2021թ. անհասկանալի կերպով www.armeps.am համակարգի միջոցով ստանում ենք Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին ծանուցում, մինչդեռ արձանագրված անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ տրված ժամկետը դեռևս չէր ավարտվել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝ գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համա¬պատաս¬խանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե՝

1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.

2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը.

3) ոչ մի հայտ չի ներկայացվել.

4) պայմանագիր չի կնքվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 26-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի անդամը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ հանգամանքների վրա.

Ինչպես արդեն հայտնել ենք, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար «Գնդեվանքի քայլարշավային արահետի բարեկարգում» շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված TUR-11.6 ծածկագրով գնման ընթացակարգ:

Վերը նշված Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել միայն «Մավշին» ՍՊԸ-ն, որի կողմից ներկայացված հայտի փաթեթում բացակայել են որոշ փաստաթղթեր և

մասնակցին առաջարկել է մինչև 18.05.2021թ. ներառյալ շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Նույն 18.05.2021թ. անհասկանալի կերպով www.armeps.am համակարգի միջոցով ստանում ենք Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին ծանուցում /կցվում է/, մինչդեռ արձանագրված անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ տրված ժամկետը դեռևս չէր ավարտվել և Ընկերությունը արդյունքում զրկվել է հնարավորությունից ներկայացնելու շտկված փաստաթղթերը:

Վերոհիշյալի արդյունքում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, ինչն էլ իր հերթին առաջացրել է նույն Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, ինչպես նաև 7-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները և խոչընդոտել է «Մավշին» ՍՊԸ-ի գնման գործընթացին մասնակցելու իրավունքի իրացումը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է պարտավորեցնել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար Գնդեվանքի քայլարշավային արահետի բարեկարգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված TUR-11.6 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 26.05.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. <u>Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 24.05.2021թ. թիվ 21456-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ «Գնդեվանքի քայլարշավային արահետի բարեկարգում, TUR-11.6» ազգային մրցույթը անց է կացվել Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման Ծրագրի շրջանակներում, Համաշխարհային Բանկի «Ապրանքների, աշխատանքների և ոչ-խորհրդատվական ծառայությունների գնում ՄՋՎԲ փոխառությունների և Համաշխարհային բանկի վարկերի ու դրամաշնորհների փոխառուների կողմից» հունվար 2011թ., վերանայված հուլիս 2014թ. գնումների ընթացակարգերով, ինչը ենթադրում է, որ սույն գնման գործընթացը չի կանոնակարգվում «Գնումների մասին» ՀՀ օրենքով:

Հայտնում ենք նաև, որ 19.05.2021թ. ստացել և 21.05.2021թ. գրությունով պատասխանել ենք «ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ-ին, միևնույն ժամանակ տեղեկացնելով Համաշխարհային Բանկին սույն բողոք նամակի վերաբերյալ:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Համաշխարհային Բանկը հաստատել է սույն մրցութային գործընթացի կասեցումը STEP համակարգի միջոցով:

Կից ներկայացնում ենք նաև 18.12.2020թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/119 որոշումը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 26.05.2020թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված դիրքորոշումը:

<u>3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/32 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2021/32 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար Գնդեվանքի քայլարշավային արահետի բարեկարգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «TUR-11.6» ծածկագրով Ազգային մրցակցային մրցույթ (հետայսու նաև՝ Մրցույթ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մավշին» ՍՊԸ-ն:

2. «TUR-11.6» մրցութային հրավերի համաձայն՝ Մրցույթի հետ կապ վեճերը ենթակա են լուծման Վեճի դատավորի կողմից:

3. Մրցույթը կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 23.02.2016թ. թվագրված թիվ 8572-AM վարկային համաձայնագրի հիման վրա տրամադրված ֆինանսավորման շրջանակներում:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Մավշին» ՍՊԸ-ի 19.05.2021թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի 24.05.2021թ. թիվ 21456-2021 գրությամբ հայտնած դիրքորոշումը և գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

Այսպես, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար Գնդեվանքի քայլարշավային արահետի բարեկարգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «TUR-11.6» ծածկագրով Ազգային մրցակցային մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մավշին» ՍՊԸ-ն:

«Մավշին» ՍՊԸ-ի կողմից 19.05.2021թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացվել է բողոք:

Ներկայացված բողոքի շրջանակներում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից Պատվիրատուից պահանջվել է Մրցույթի ֆինանսավորման համար հիմք հանդիսացող փաստաթղթի պատճենը, որպիսի պահանջը Պատվիրատուի կողմից կատարվել է և տրամադրվել է 8572-AM վարկային համաձայնագիրը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Մրցույթը կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 23.02.2016թ. թվագրված թիվ 8572-AM վարկային համաձայնագրի (հետայսու նաև՝ Համաձայնագիր) հիման վրա տրամադրված ֆինանսավորման շրջանակներում:

Միևնույն ժամանակ Ընկերությունը բողոքով հայտնել է, որ Մրցույթի կազմակերպման ընթացքում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, ինչն էլ իր հերթին առաջացրել է նույն Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ

մասերի, ինչպես նաև 7-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները և խոչընդոտել է «Մավշին» ՍՊԸ-ի գնման գործընթացին մասնակցելու իրավունքի իրացումը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է պարտավորեցնել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար Գնդեվանքի քայլարշավային արահետի բարեկարգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված TUR-11.6 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը:

Վերոշարադրյալի վերաբերյալ հարկ եմ համարում նշել, որ «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և Հայաստանի Հանրապետության օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են վավերացված միջազգային պայմանագրերի նորմերը:

Միևնույն ժամանակ Համաձայնագրի III-րդ Բաժնի (Գնումներ) համաձայն՝ Ծրագրի համար պահանջվող և Վարկային միջոցների հաշվին ֆինանսավորվող բոլոր ապրանքներն, աշխատանքները և ոչ խորհրդատվական ծառայությունները ձեռք են բերվում Գնումների ուղեցույցերի Բաժին I-ում սահմանված կամ դրանում հղում կատարված պահանջների և սույն Բաժնի դրույթների համաձայն:

Միջազգային մրցակցային մրցույթից բացի հետևյալ մեթոդները կարող են կիրառվել Գնումների պլանում սահմանվող պայմանագրերի շրջանակներում ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնման համար:

Վարկառուի «Ազգային մրցակցային մրցույթ» գնման մեթոդը կարող է կիրառվել Ծրագրի համար ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնման համար.....:

Համաձայնագրի Հավելվածի I. Մասի (Սահմանումներ) համաձայն՝ «Գնումների ուղեցույցներ» նշանակում է Բանկի կողմից 2011 թ. հունվարին հրապարակված (վերանայված 2014 թ-ի հուլիսին) «ՈՒղեցույցերը՝ Համաշխարհային Բանկի Փոխառուների կողմից ՎՀՄԲ փոխատվությունների և ՄՀԸ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում կատարվող ապրանքների, աշխատանքների, ոչ խորհրդատվական ծառայությունների գնումների համար»:

«TUR-11.6» մրցութային փաստաթղթի համաձայն՝ **Մրցույթի հետ կապ վեճերը ենթակա են լուծման Վեճի դատավորի կողմից:**

Այսպիսով՝ վերոնշվածի հաշվառմամբ արձանագրում եմ, որ Ընկերության կողմից ներկայացված բողոքը ենթակա չէ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից քննության, հետևաբար ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Մավշին» ՍՊԸ-ի կողմից 19.05.2021թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**